ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1951 *Общественные науки*

Վ. Նալբանդյան

ՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ 451 ԹՎԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Օտարերկրյա բռնակալությունների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմության հերոսական էջերից մեկն է 451 թվի ապստամբությունը՝ պարսկական տիրապետության դեմ։

Հայ պատմական և պատմաբանասիրական գրականության մեջ շատ է գրվել այդ ապստամբության (որը հետո վերաճեց պատերազմի) պատճառների, շարժիչ ուժերի և բնույթի մասին, սակայն մինչև այժմ էլ, մեր կարծիքով, դեռևս մարքսիստական լուսաբանության չեն ենթարկվել այդ հարցերը։ Սույն հոդվածը այս ուղղությամբ կատարված մի փորձ է։

451 թվի ապստամբության մասին հաղորդում են 5-րդ դարի հայ պատմիչներից երկուսը՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին։ Այդ ապստամբության պատմական իրադարձությունների նկարագրությանն է նվիրված Եղիշեի երկասիրությունը[1] և Փարպեցու՝ «Հայոց պատմության» երկրորդ դրվագը։ Հետագա դարերի հայ պատմիչներից մի քանիսն էլ խոսել են քաղաքական այդ կարևոր իրադարձության մասին (Սեբեոս, Հովհաննես կաթողիկոս. Թովմա Արծրունի, Կիրակոս Դանձակեցի), սակայն սրանք կրկնում են Եղիշեին և Փարպեցուն և ըստ էության ոչինչ չեն ավելացնում նրանց հաղորդածների վրա։

Այդ ապստամբության պատմական իմաստը բացահայտելու տեսակետից, առավել արժանահավատը ապստամբության ժամանակակից, նրա սի շարք դեպքերին մասնակից ու ականատես Եղիշեն է, որը «իբրև պատմիչ ավելի հմուտ է և ավելի պատրաստություն ունի, քան ճարտասան պատմիչ Ղազարը»։[2]

Սակայն 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում հայ բուրժուական պատմագրությունը (Գարագաշյան, Կյուլեսերյան, Լեո և ուրիշներ) ի հակակշիռ Եղիշեի, 451 թվի հայոց ապստամբության հանգամանքները քննելիս իբրև պատմիչ առաջ քաշեց Ղազար Փարպեցուն, իսկ Եղիշեի գիրքը այդ պատմագրության կողմից հռչակվեց իբրև գեղարվեստական գործ՝ հորջորջվելով զանազան անուններով— դյուցազներգություն, «վիպասանություն», նույ-

[1] *Եղիշեի գիրքը տպագրվել է զանազան վերնագրերով—«Գիրք պատմութեան սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց», «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», «Պատմութիւն նահատակութեան սրբոց Վարդանանց և Ղևոնդեանց բահանայից», «Վասն Վարդանանց և Հայոց մասին»—և այլն, սակայն, ինչպես երևում է Եղիշեի խոսքերից, նրա գիրքը կոչվել է «Վասն Հայոց պատերազմին։ Գրքի ընծայականում, Եղիշեն դիմելով Դավիթ Մամիկոնյան երեցին, ասում է. «Հանն, զոր պատուիրեցեր՝ արարի։ ով քաջ. վասն Հայոց պատերազմին հրամայացեր, յորում բազումք առաքինեցան քան զսակաւս» (Թիֆլիս, 1913, էջ 7)։ Ինչպես տեսնում ենք, Եղիշեն իր երկը կոչել է «Վասն Հայոց պատերազմին» և վերնագրում չի հիշվում Վարդանի անունը, որն ավելացրել են հետագայում հրատարակիչները։ (Տես նաև՝ Մ. Աբեղյան «Հայոց հին գրականության պատմություն», հատ. Ա. էջ 291)։*

[2] *Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն» հ. 1-ին, էջ 329։*

նիսկ՝ «բանաստեղծություն», այն հայտարարվեց իբրև պատմական աղբյուր ոչ հավաստի։ Բուրժուական օբեկտիվիզմի կարծիքով «Եղիշեի գրվածքը իսկական պատմություն չէ», որովհետև «Հեղինակը սառը դիտող չէ և դեպքերը միահար չարձանագրեր. նորա նպատակը ոչ այնքան տեղեկություններ հաղորդելն է, որքան խորհրդածություններ անել, զգացմունքներ բորբոքել»։[1] Միանգամայն ճիշտ է նկատում այս առթիվ պրոֆ. Մկրյանը,— որ բուրժուական պատմագրությունը «... արտահայտելով ժողովրդական շարժումների նկատմամբ բուրժուազիայի վախը, ամեն կերպ աշխատում է հերքել և պատմության «օրինակով» ցույց տալ ազատագրական պայքարի ապարդյուն լինելը։ Եվ ահա նա «բանաստեղծություն» համարելով այն, ինչ Եղիշեն գրել է 451 թվի ապստամբության մասին, առաջ է քաշում Փարպեցուն, որովհետև վերջինս Ավարայրի ճակատամարտում հայերի դիմադրությունը շատ թույլ է ներկայացնում և Գարագաշյանը նրա պատմությունից կարողանում է մի քանի «մանրամասնություններ» կորզել Վասակի դավաճանական քաղաքականությունը արդարացնելու համար»։[2]

Եղիշեի երկը, իսկական, հավաստի պատմական աղբյուր լինելուց բացի, միաժամանակ մի գեղեցիկ գրական հուշարձան է, մի նշանավոր էպոպեա՝ օժտված որոշակի գեղարվեստական արժանիքներով։ Եղիշեի պատմության մեջ առավել ցայտունությամբ է արտահայտվել հայոց հին պատմագրության տրադիցիաներից մեկը— պատմական դեպքերի հավաստի շարադրանքը գեղարվեստական ծաղկուն ոճով ներկայացնելը։

Մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իսկապես Եղիշեն 451 թվի ապստամբության իրադարձությունները ներկայացնում է շատ ավելի հմուտ ձևով ու տրամաբանական պատճառաբանվածությամբ, քան Փարպեցին։ Եղիշեն իր շարադրելիք նյութին վերաբերվում է պատմաբանի հմտությամբ, նա նախապես որոշում է իր դրելիքի սահմանները։ Նա նյութը նախապես բաժանում է գլուխների «ընծայականի» մեջ, ամեն մի գլխին տալով համապատասխան վերնագիր, ապա՝ ամբողջ շարադրանքը բաժանում է երեք հիմնական մասի՝ «դսկիզբն», որտեղ պատմում է ապստամբության նախապրյալների մասին, «զմիջոցն», որում ներկայացնում է ապստամբության ընթացքը, և «զկատարածն», ուր պարզում է ապստամբության հետևանքները։ Այնուհետև՝ նախքան ապստամբության բուն շարադրանքին անցնելը, Եղիշեն իր գրքի «Ժամանակք» գլխում տալիս է ժամանակի քաղաքական դրության, էպոխայի ընդհանուր նկարագիրը և այդ ֆոնի վրա էլ ներկայացնում է հայերի ապստամբության կոնկրետ հանգամանքները։ Այդպես չի վարվել մեր և ոչ մի պատմիչ. Եղիշեն այս տեսակետից բացառություն է։ Քաղաքական դրության նկարագիրը տալուց հետո նա պարզում է ապստամբության նախադրյալներն ու անմիջական պատճառները, հարուստ նյութ տալով հայ հասարակության բոլոր խավերի գործողությունների իրական դրդապատճառները ըմբռնելու համար։

Միաժամանակ, սակայն, իբրև իր դարի մտածող ու գործիչ, Եղիշեն հա-

[1] Զամինյան, «Հայ գրականության պատմություն», էջ 101 (ընդգծումը իմն է—Վ. Ն.)։

[2] Տես պրոֆ. Մկրյանի «Պատմական անցյալի իդեալականացման դեմ» հոդվածը «Պարտիական կյանք» ամսագիր, 1947 թ., № 4, էջ 48—49։

մեմում է իր շարադրանքը կրոնական բացատրություններով, որը պետք է ամեն առանձին դեպքում զատել և մի կողմ դնել։

Փարպեցին էլ, ապրելով ու իր երկը գրելով Եղիշեից հետո, հնարավորություն է ունեցել որոշ տեղեկություններով լրացնել Եղիշեի պատմածները։

Ավելորդ չենք համարում այստեղ համեմատության համար տալ թե ի՞նչն է Փարպեցին դնում իբրև այդ արյունալի պատերազմի պատճառ։ Մի կողմ թողնենք այն, որ Փարպեցին գրեթե ոչինչ չի հաղորդում ժամանակի քաղաքական դրության և ապստամբության նախադրյալների մասին, իսկ իբրև դրա անմիջական պատճառ նա դնում է Վարազվաղանի առասպելախառն զրույցը, որով և իմիջիայլոց, սկսում է իր պատմության երկրորդ գրվագը։[1] Ըստ Փարպեցու Վասակ Սյունեցու քույրը ամուսնացած էր սյունյաց մի սեպուհի՝ Վարազվաղանի հետ, սա վատ է վարվում իր կնոջ հետ, որի պատճառով Վասակը թշնամանում է փեսայի հետ և սպառնում է սպանել նրան։ Վարազվաղանը, իմանալով Վասակի մտադրությունը, փախչում է Պարսկաստան, ընդունում զրադաշտական կրոնը և պարսից հազարապետին— Միհրներսեհին խորհուրդ է տալիս՝ համոզել Հազկերտին և պատերազմի ելնել հայոց դեմ։ Միհրներսեհն էլ, որը հեղինակի հավաստիացումով նույն քանին համակարծիք էր, խորհուրդ է տալիս Հազկերտին։ Հազկերտը համոզվում է, ստանալով մոգերի և երկրի ավագանու համաձայնությունը, սկզբում հրովարտակ է գրում, իսկ ապա և ելնում է հայոց դեմ պատերազմի։ Այս առասպելական պատմությունը, որը բաղել է հավանաբար տոհմական զրույցներից, Փարպեցին համարում է իբրև հայ-պարսկական արյունահեղ պատերազմի պատճառ։ Հենց միայն թեկուզ այս բանում անմիջապես երևում է Ղազար Փարպեցու անհմտությունը՝ 451 թվի պատերազմի քաղաքական դրդապատճառների բացահայտման մեջ։

* * *

451 թվի հայերի՝ պարսկական տիրապետության դեմ մղած ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառները ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել այդ ապստամբությանը անմիջականորեն նախորդող շրջանի քաղաքական իրադարձությունների վրա։

Հայաստանը իր խիստ կարևոր ստրատեգիական դիրքի և բնական հարստությունների պատճառով դարեր շարունակ կռվի առարկա է եղել արևելքի և արևմուտքի հզոր տերությունների միջև։ Հռոմեական (հետո էլ հունական ու բյուզանդական) կայսրությունները և Պարսկաստանը դարեր շարունակ պայքար էին մղում Հայաստանին տեր դառնալու համար և ի վերջո 4-րդ դարի վերջին բառորդում համաձայնության են գալիս Հայաստանը բաժանելու վերաբերյալ։ 387 թվին Տիզբոնի դաշնագրությամբ Հայաստանը բաժանվեց երկու մասի— Հայաստանի արևմտյան մասը անցավ Հռոմեական կայսրությանը, իսկ արևելյան մասը՝ Պարսկաստանին։

Հայաստանի արևմտյան մասում անմիջապես վերացվեց Արշակունիների թագավորությունը և երկրի իշխանությունը հանձնվեց կայսեր կողմից նշանակվող կառավարիչներին։ Արևելյան մասում Արշակունիների թագավորությունը մի առ ժամանակ, մինչև 429 թիվը պահպանում է իր կիսանկախ վիճակը՝ հարկատու դառնալով պարսից արքունիքին։ Արշակունի թագավորնե-

[1] Տես Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1907 թ., էջ 79—89։

ը այս շրջանում (387—429 թվերին) խոշոր չափով կորցնում են իրենց ազդեցությունը հայ ֆեոդալական տների՝ նախարարությունների նկատմամբ։ Նախարարական տները՝ օգտվելով թագավորական իշխանության թուլությունից՝ ավելի են ուժեղացնում իրենց կենտրոնախույս ձգտումները, որն իր հերթին նպաստում է կենտրոնացած իշխանության հետագա թուլացմանը։ Պարսից արքունիքը հարմար առիթի էր սպասում՝ Արշակունիների դինաստիային վերջ տալու համար. և այդ առիթը հանդիսանում է նախարարների բանսարկությունը՝ Արշակունի Արտաշեսի վերաբերյալ։ Պարսկական արքունիքը 429 թվին գահազուրկ է անում Արտաշեսին՝ Արշակունի վերջին թագավորին, երկրի կառավարումն հանձնելով պարսից արքունիքի կողմից նշանակված կառավարչին՝ մարզպանին։ Արշակունիների թագավորության վերացումով Հայաստանը փաստորեն կորցնում է իր պետական անկախությունը, սակայն նախարարների ֆեոդալական իրավունքներին դեռևս ձեռք չի տրվում։ Հայ նախարարները անմիջական վասալական կախման մեջ են ընկնում պարսկական թագավորից։

Պարսկական արքունիքը՝ հայ Արշակունիների թագավորությունը վերացնելուց հետո մտածում էր անմիջապես գրավել Հայաստանը՝ հետագայում օգտագործել նրա ստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող դիրքը՝ հարևան երկրները գրավելու և ապա Հունաստանը նվաճելու համար։ Միաժամանակ, պարսից արքունիքը մտադրություն ուներ Հայաստանը վերջնականապես գրավելուց հետո վերջ տալ հայկական ինքնավարության վերջին մնացորդներին էլ, Հայաստանը դարձնել իր պետության մի մարզը, ապա և վերջ տալ հայ ժողովրդի ինքնուրույն գոյությանը՝ նրան ասիմիլացիայի ճանապարհով պարկացնելու միջոցով։ Ահա այս մտադրությունները իրագործելու համար պարսից թագավորները կիրառում են մի շատ նենգ և խորամանկ քաղաքականություն։ Թեև երկրի կառավարիչ է նշանակվում մարզպանը, բայց հայ նախարարների իրավունքներին սկզբում ձեռք չի տրվում։ Այդ երևում է Եղիշեի մի վկայությունից. «Եվ իբրև գնա (Արտաշեսին— Վ. Ն.) մերժեաց ի թագավորութենէն, ի նախարարսն հայոց անկանէր թագավորութիւնն»։[1]

Պարսկական արքունիքի այս քաղաքականությունը պետք է բացատրել նրանով, որ հայ նախարարությունները, որոնք իրենց ձեռքին բավականաչափ խոշոր զինվորական ուժ ու հզորություն ունեին, դժվար էր միանգամից վերջ տալ։

Արշակունիներին տրվող հարկը այժմ պարսից արքունիքին է տրվում, բայց զինվորական ուժի ղեկավարությունը թողնվում էր նախարարներին։ Միաժամանակ, սկզբում հայերի նկատմամբ կրոնական հալածանքի քաղաքականություն չի վարում պարսից արքունիքը, շատ լավ ըմբռնելով, որ կարևորը երկրի քաղաքական նվաճման հարցն է։ Այս առթիվ ուշագրավ է Եղիշեի մի վկայությունը։ Նա նշելով, որ հայ Արշակունիների վերացումից հետո իշխանությունը նախարարներին անցավ, ավելացնում է.

«Զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց յովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի։ Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրացլուխ կամակարութեամբ Եւեղի

[1] Եղիշե, «Պատմություն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 11։

լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբանց տէրութեանն Շապհոյ արքայից արքայի, մինչև ցամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ՝ զոր եգիտ սատանայ իւր գործակից...»։[1]

Բացի այն, որ Եղիշեն միանգամայն ճիշտ է բնորոշում Հայաստանի հարկատու-կիսանկախ վիճակը, նրա այս վկայությունը կարևոր է նաև մի այլ տեսակետից.— ինչքան էլ որ Եղիշեն տոգորված լինի կրոնական մտածողությամբ (որը, ի դեպ, շատ են չարաշահում նրա ուսումնասիրողներից շատերը, հատկապես կղերական պատմագրության ներկայացուցիչները), այնուամենայնիվ, ինչպես երևում է նրա վերոհիշյալ վկայության ընդգրծված մասից, նա ժամանակին նկատել և հասկացել է, որ կրոնական հարցը քաղաքական հարցից անկախ գոյություն չունի. նա ըմբռնում է, որ քանի դեռ հայերը որոշ ինքնուրույնություն ունեին (դեռևս հայ նախարարների ձեռքին էր գտնվում իշխանությունը և զինվորական ուժը), քաղաքական, եթե ոչ լրիվ, գոնե կիսանկախ ազատություն ունեին, երկրում ազատորեն պաշտվում էր քրիստոնեական կրոնը, կամ ինչպես պատմիչն է ասում. «աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ. երևելի լինէր յաշխարհին Հայոց»։ Այստեղից էլ բխում է տրամաբանական եզրակացությունը՝ եթե հայերը կորցնեն իրենց քաղաքական ինքնավարությունը ամբողջությամբ, ապա նրանք քրիստոնեական կրոնն ազատորեն պաշտելու հնարավորությունից կզրկվեն։ Այսպես է ընկալել Եղիշեն իր ժամանակ կրոնական անկախության հարցը, թեև նա հետագայում, պատմական դեպքերի շարադրանքը տալիս մեծ մասամբ իր այս դիտողությանը հակասելով, դավանանքի հարցը դիտում է իբրև ինքնակա հարց, որից էլ շատ հաճախ կախման մեջ է գնում քաղաքական հարցերը։ Այս այսպես է, և այն դարում այլ կերպ էլ մտածել չէր կարող քրիստոնեական դոգմատիկայի սահմաններում դատող պատմիչը։

Հազկերտ 2-րդը պարսից արքունիքի հետապնդած վերջնական նպատակներին հասնելու համար սկսում է ձեռնարկել մի շարք միջոցառումներ, որոնց վրա հատուկ ուշադրություն է դարձրել Եղիշեն։ Նա նախ մտածում է Հայաստանը զրկել ապագա դեպքերի ժամանակ հավանական դաշնակիցներ ունենալու հնարավորությունից։ Հույները ապագայում կարող էին օգնել հայերին և խանդարել Հազկերտի պլաններին։ Ահա թե ինչու նա նախ մտածում է հայերին զրկել հույների օգնությունից։ Այս առթիվ Եղիշեն վկայում է. «Եւ առ յոյժ յիմարութեանն իբրև զգազան մի կատաղի յարձակեցաւ (Հազկերտը— Վ. Ն.) ի վերայ յաշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զդերի և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին»։[2]

Պարսիկներին հաջողվեց հույներին արագ ծնկի բերել, որովհետև հույներին սպառնում էր Աթիլլայի հորդաների հարձակումը. հույները համաձայնվում են իրենց համար ստորացուցիչ պայմաններով հաշտություն կնքել պարսիկների հետ, խուսափելով երկու ճակատով կռվելու վտանգից։

Ինչպես վկայում է Եղիշեն, հույների դեմ տարած հաղթանակից հետո Հազկերտը սկսում է պատերազմել քուշանների դեմ, նպատակ ունենալով մի

[1] Եղիշե, «Պատմություն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 11—12, ընդգծումը իմն է,—Վ. Ն.։

[2] Նույն տեղում, էջ 11—12։

կողմից ամրացնել իր հյուսիսային և հյուսիս արևելյան սահմանները, իսկ մյուս կողմից՝ զրկել քուշաններին՝ ապագայում հայերին օգնության գալու հնարավորությունից։ Քուշանների դեմ վարած պատերազմին, որը 7 տարի է տևում, Հազկերտը մասնակից է դարձնում նաև հայոց, վրաց, աղվանից և իբերն ենթակա մյուս երկրների (Լփնաց, Ծավդեից, Կորդվաց, Աղձնյաց) զինվորական ուժերին, նպատակ ունենալով ընկճել այդ երկրների հետագա դիմադրողականությունը ևս։

Եղիշեն գրում է.

«Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից և ի Լփնաց, ի Ծաւդէից և ի Կորդուաց, յԱզձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց, ուոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջի ժամանակաւ։

Գունդ կազմէր ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ...»։[1]

Եղիշեի այն խոսքերը, որ այդ երկրների համար «ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջի ժամանակաւ», ցույց է տալիս, որ նախքան Հազկերտի սույն հրամանը՝ հայոց, վրաց, աղվանից և մյուս երկրների զինվորական ուժը սովորաբար հեռու տեղեր չի տարվել արշավանքների։ Հայ և մյուս երկրների նախարարները վասալական կախման մեջ լինելով պարսից թագավորից, պահանջի դեպքում մասնակցում էին նրա կազմակերպած արշավանքներին. սակայն նրանք, ըստ երևույթին, մասնակցել են կամ սահմանակից վայրերի կռիվներին, կամ՝ օգտագործվել են ներքին թշնամիների դեմ։ Հազկերտի կազմակերպած այս հեռավոր ու ծանր արշավանքը բնականաբար պետք է նոր դժգոհություն առաջ բերեր զորքի, ապա և հայ նախարարների մեջ, որոնց հաշվին էր պահվում ու սպառազինվում պարսիկների համար կռվող հայոց զորքը։

Հազկերտը, ինչպես կարելի է եզրակացնել Եղիշեի վկայությունից, հատուկ ուշադրություն է դարձնում Հայաստանից քուշանների դեմ տարվող բանակը (այրուձին) կազմելու վրա, նրա մեջ ընդունելով «ազատներին», «ազատորդիներին» և «յարքունի տանէն զոստանիկս», որոնք հայկական կանոնավոր բանակի հիմնական կորիղն էին կազմում։ Այսպիսով Հազկերտը թուլացնում է ապագայում իր դեմ ելնող հայոց զորական ուժերը՝ բանակի հիմնական մասը երկրից դուրս տանելով։

Հազկերտը քուշանների դեմ երկու տարի կռվում է, բայց առանձին վնաս հասցնել չի կարողանում նրանց, ապա զինվորներին իրենց տեղն է ուղարկում, և ամեն տարի նոր թարմ ուժեր է պահանջում և այսպես շարունակվում է 7 տարի։ Վերջապես նրան հաջողվում է նեղը լծել և քուշաններին, և այդպիսով ամրացնել Պարսկաստանի քաղաքական դիրքը, որը նրան հնարավորություններ է տալիս ավելի համարձակորեն գործել։

Հազկերտը նախ իր բանակի կազմի մեջ մտնող զորքին զանազան տանջանքներով հարկադրում է դավանափոխ լինել, և այս նա անում էր օտար աշխարհում, հայրենիքից մոտ 2000 կիլոմետր հեռու գտնվող իր պետության շահերի համար կռվող զորքի նկատմամբ։ Նա ցանկանում է աստիճանաբար այդ զինվորական ուժը դուրս բերել սեփական երկրի ազդեցությունից։

[1] Եղիշե, էջ 16, ընդգծումն իմն է։—Վ. Ն.։

Եղիշեն, իբրև ականատես, մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայոց այրուձիի կրած հալածանքների մասին։ Զորքի մեջ գտնվող նախարարներից ոմանց Հազկերտը զրկում է ազնվական պատվից, աքսորում է հեռավոր վայրերը, զորքին քաղցած է պահում, վատ ձմեռանոցներում ապրեցնում, պակասեցնում է ռոճիկը, նրանց մաշում է կռիվներում։

Եղիշեն վկայում է այդ մասին. «Եւ զոմանս ի նոցանէ (հայոց այրուձիից— Վ. Ն.) ընդ քարշ վարէին յօտարութիւն յազնուական պատուոյն անարգեալ։ Եւ գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաստան՝ յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի. և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով։ Եւ զամենեցունց զկարգեալ թոշակսն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս զդժնեայ վայրսն հրամայէին նոցա. և անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին»։[1]

Այնուհետև Հազկերտը ձեռնամուխ է լինում հայոց երկրի գլխավոր քաղաքական ղեկավար ուժի՝ նախարարության նկատմամբ նոր քաղաքականության կիրառմանը, որը մանրամասն հետազոտության է ենթարկվել ակադ. Մանանդյանի կողմից «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» արժեքավոր աշխատության մեջ։

Ակադ. Մանանդյանը հենվելով ժամանակակից պատմիչների վկայությունների վրա, միանգամայն ճիշտ է նկատում, որ Հազկերտը այլևս չի հանդուրժում հայ նախարարների արտոնյալ վիճակը և սահմանափակում է նրանց նախարարական-ազնվականական իրավունքները, նրանց նկատմամբ սահմանելով արքունիքի հարաբերության նույն կարգն ու վերաբերմունքը, ինչ որ գոյություն ուներ Պարսկական արքունիքի մյուս մարզերում։

Միանգամայն ճիշտ է ակադ. Մանանդյանի այն պնդումը, թե՝

«...Սասանյան Պարսկաստանում, որի սոցիալական ու տնտեսական հատուկ կարգերն ու կառուցվածքը նման ու համապատասխան էին ֆեոդալական Հայաստանի ներքին կազմակերպությանը, խիստ զորեղ էր պետության կենտրոնացումը։ Թագավորական իշխանությունն այստեղ տնօրենն էր ամբողջ երկրի և իրական տերը ու հրամայողը ֆեոդալ իշխանավորների։

Իբրև ֆեոդալական զորեղ միապետություն՝ Պարսկաստանը, բնականաբար, ձգտում էր այժմ սահմանափակել նախարարական իշխանությունների ինքնուրույնությունը և ենթարկել նրանց թագավորական գահի անմիջական ազդեցությանը»։[2]

Ճիշտ է նշում ակադ. Մանանդյանը, որ այս նպատակով Հազկերտը ձեռք է առնում մի շարք միջոցառումներ։ «Գործակալութիւն» պաշտոնները, որ առաջ ժառանգական էին որոշ տոհմերի համար, հիմա տրվում էին պարսիկ իշխանավորներին կամ պարսից արքունիքին նվիրված հայ նախարարներին։ Ապա, կիսանկախ երկրների, «տանուտիրական» ու «նահապետների» իրավունքները, որն առաջ նույնպես ժառանգական էր, հիմա Հազկերտը փոփոխում է[3] և ինքն է նշանակում կամ հանում նախարարական տոհ-

[1] Եղիշե, էջ 29։
[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 287—288։
[3] Նույն տեղում, էջ 288։

մի տանուտերին՝ հաշվի առնելով այն, թե այդ պաշտոնում նստողը ո՛րքան հավատարմությամբ է ծառայում պարսից արքունիքին։

Այն, որ իրոք Հազկերտ 2-րդը, իսկ հետո նաև Պերոզը, խոշոր չափով սահմանափակել են հայոց նախարարների ֆեոդալական ազնվականական-ժառանգական իրավունքները, խախտելով մինչև այդ սահմանված կարգը, որը լուրջ դժգոհություններ է առաջացնում հայ նախարարների մեջ, երևում է Ղազարի և Փարպեցու մի շարք կարևոր վկայություններից։

Անդրադառնալով Հազկերտի՝ քուշանների դեմ պատերազմի տարած հայ նախարարների նկատմամբ տմարդի քաղաքականությանը, Եղիշեն վկայում է.

«Քանզի ձեռն արկանել և ունէլ ոչ կարէր (Հազկերտը— Վ. Ն.),— վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա,— սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց, և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի բաջ արանց. և զի մի մի թուիցեմ, այլ զամենայն արժանաւորսն յետս տանէր. մինչ և գհայր և զորդի քակեր ի միմիանց»։[1]

Ապա խոսում է այն մասին, որ հայ զորականները, որոնց թվում և նախարարները, հրաժարվում են կատարել Հազկերտի պահանջը և զրադաշտական կրոնը չեն ընդունում, այդ պատճառով էլ «եւ զոմանս ի նոցանէ ընդ քարշ վարէին յօտարութիւն յազնուական պատուոյն անարգեալ»։[2]

Այս վկայություններից պարզ երևում է, որ նախ՝

ա) Հազկերտը մի կողմից ձգտել է սահմանափակել նախարարների ժառանգական-տոհմական իրավունքները, նրանցից մի մասին զրկելով ազնվական տոհմական պատվից։

բ) Այնուհետև, Հազկերտը հայ նախարարներից ամեն մեկի նկատմամբ վարվել է ոչ թե առաջներում սահմանված կարգի («Դահնամակի») համաձայն, այլ՝ առաջնորդվել է գործնական նկատառումներով. եթե հայ այս կամ այն նախարարը նվիրված է պարսից արքունիքի քաղաքականությանը, բայց նա «կրտսեր» նախարարների կազմից է կամ «անարգ» է, այսինքն տոհմիկ չէ, ապա Հազկերտը նրան առաջ է քաշել, բարձր պաշտոնի է նշանակել, և ընդհակառակը՝ «ավագ» նախարարներին, «պատուական» մարդկանց ետ է մղել, նույնիսկ նրանց ձեռքից խլել է ազնվականական պատիվը, եթե նրանք պաշտպանել են հակապարսկական քաղաքականությունը։

Պատմիչների վկայություններից միանգամայն ճիշտ հետևցնում է ակադ. Մանանդյանը, որ Հազկերտի քաղաքականությունը հայ նախարարների նկատմամբ շարունակում է նրա հաջորդը՝ Պերոզը։ Փարպեցին ավելի է պարզում պարսից արքունիքի այս նոր քաղաքականության էությունը, քաղաքականություն, որը լուրջ դժգոհություններ է առաջացնում հայ նախարարների մեջ։ Այս հանգամանքի վրա հատուկ ուշադրություն է դարձնում ակադ. Մանանդյանը։ Այսպես օրինակ, Վահան Մամիկոնյանը Միհրանի հետ վարած բանակցության ժամանակ դժգոհություն արտահայտելով, ասում է նրան.

«Արդ՝ Հայոց աշխարհս որպիսի մեծ և պիտոյի աշխարհ է. և արդ ցո՛յց ինձ այր մի յայսպիսի աշխարհիս, որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժա-

[1] Եղիշե, էջ 24։
[2] Նույն տեղում, էջ 288։

նաւորապէս հասեալ է ի տանուտերութիւն. այլ որեար աւազակ և անպիտան, հացկատակք և վատտոհմիկք, որ զան զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբեն...»[1]

Մեկ ուրիշ տեղ դարձյալ նույն Վահանն ասում է Միհրանին.

«Բայց արդ, զոր ձեր ի վատ տոհմէ և յանպիտանի ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք՝ դոքա ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն և զանուն բարի և զլաւութիւն»։[2]

Վահանը պահանջում է պարսիկներից՝ «զտոհմիկս առ տոհմիկս ունիր և զվատտոհմական առ անտոհմակս» և ոչ թե «զյետինս առ լաւսն ունել և զլաւսն յետս տանել»։

Հազկերտը չէր բավարարվում միայն հայ նախարարների ֆեոդալական-ազնվականական իրավունքների սահմանափակումով. նա ձգտում էր նախ քայքայել նրանց առանց այն էլ թույլ միասնությունը, ե ապա՝ աստիճանաբար վերջ տալ հայ նախարարություններին։ Այս նպատակով նա ձգտում է բարոյապես այլասերել նախարարներին՝ կաշառքների, պատիր խոստումների ու այլ նենգ միջոցներով։ Եղիշեն վկայում է, որ Հազկերտը «Պատրէր զոմանս ի նոցանէ (հայ նախարարներից— Վ. Ն.) ոսկւով և արծաթով, և զբաղումս ևս այլոց ևս առատ պարգևօք. իսկ զոմանս ագարակօք և մեծամեծ գեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօքն»։[3]

Նա ձգտում էր քանդել հայ նախարարների միասնությունը և ինչպես ցույց է տալիս Եղիշեն, հասնում է որոշ արդյունքների՝ «Մինչ և զհայր և զորդի քակէր ի միմեանց»։ Դենշապուհի աշխարհագրի հետևանքով Հազկերտը ավելի շոշափելի արդյունքների է հասնում։ Եղիշեն այդ աշխարհագրի հետևանքների մասին խոսելիս ասում է— «զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն»։[4] Հազկերտի այս քաղաքականությունը Եղիշեն մեկնաբանում է յուրովի— թե այս բոլորը Հազկերտը անում էր, որպեսզի հայ նախարարներին ստիպի զրադաշտականությունն ընդունել։ Եղիշեի այս բացատրությունն ընդունելի չէ։ Հազկերտը այս քաղաքականության միջոցով ձգտում էր գլխատել հայոց երկիրը՝ զլատել երկրի գլխավոր ղեկավար քաղաքական ուժը, նրա միասնությունը խախտելով թույլ չտալ, որ նա կանգնի հայերի՝ պարսից դեմ նախապատրաստվող դիմադրության գլուխը։

Հայ նախարարները դժգոհ լինելով Հազկերտի և պարսից արքունիքի քաղաքականությունից առհասարակ, ձգտում էին ետ ստանալ կորցրածը՝ ձեռք բերել իրենց նախկին արտոնությունները, հասնել այն բանին, որ պարսից արքունիքը հաշվի նստի իրենց տոհմական-ժառանգական իրավունքների հետ, չոտնահարի իրենց ազնվականական իրավունքներն ու պատիվը։

Ուրեմն, ինչպես պարզ կերպով ցույց են տալիս մեր պատմիչների վկայությունները, հայ նախարարական դասը պարսից արքունիքի քաղաքականությունից դժգոհ մի օպոզիցիա էր կազմում 451 թվի իրադարձությունների նախօրյակին և նա պարսից արքունիքի դեմ կռվի պետք է ելներ՝ նախ և ա-

---

1 Փարպեցի, 1907, Թիֆլիս, էջ 301։
2 Նույն տեղում, էջ 303, ընդգծումն իմն է, Վ. Ն.։
3 Եղիշե, էջ 24։
4 Նույն տեղում, էջ 31։

ռաջ իր դասային շահը պաշտպանելու համար, իր կորցրած ֆեոդալական արտոնություններն ու իրավունքները ետ նվաճելու համար։

Այսպես ուրեմն՝ պարսից արքունիքի՝ հայ նախարարների ֆեոդալական իրավունքների սահմանափակման, ժառանգական-ազնվականական իրավունքների խախտման քաղաքականությունը՝ իբրև հայերի ապստամբության պատճառներից մեկը։

Ակադ. Մանանդյանն իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ միանգամայն ճիշտ կերպով մերժում է հայ կղերական պատմագրության գնահատականը 451 թվի հայոց ապստամբության մասին, թե հայ-պարսկական պատերազմը եղել է կրոնական, որ իբր թե այդ պատերազմը երկու կողմից էլ մղվում էր զուտ կրոնական դրդապատճառներով։

Սակայն, մյուս կողմից ակադ. Մանանդյանն այդ պատերազմը համարում է զուտ նախարարական ապստամբություն՝ պարսից արքունիքի դեմ,[1] ապստամբության մեջ տեսնելով միայն հայ նախարարական դասի ֆեոդալական իրավունքների պաշտպանության ձգտումը, նախարարական դասի դասային իրավունքների պաշտպանության դրդապատճառները։ Ակադ. Մանանդյանը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ ապստամբությանը ակտիվ մասնակցում էին նաև հայ հասարակության մյուս խավերը, որովհետև, ինչպես կտեսնենք, պարսից արքունիքի քաղաքականությունը շոշափում էր նաև մյուս խավերի դասային ու դասակարգային շահերը առանձին-առանձին վերցրած, և ամբողջ ժողովրդի քաղաքական շահերը՝ սպառնալով հայ պետականության ինքնուրույնության վերջին մնացորդներին, հայ ժողովրդի ինքնուրույն գոյությանը։ Ճիշտ է, հայ նախարարությունը այդ ապստամբության ակտիվ մասնակիցներից մեկն էր և նա պարսից արքունիքի դեմ կռվի ելավ նախ և առաջ իր կորցրած արտոնությունները ետ ստանալու համար, սակայն ապստամբության խնդիրները այդ արտոնությունները ետ ստանալով սահմանափակել, ինչպես ցույց են տալիս փաստերը, չի կարելի։ Այս հանգամանքի վրա իրավացիորեն մատնանիշ է անում նաև ընկ. Հ. Հարությունյանը իր «Վարդանանց պատերազմը» աշխատության մեջ։

Ինչպես պարզ է դառնում Եղիշեի վկայություններից, պարսից արքունիքի քաղաքականությունը սուր կերպով շոշափում էր նաև հայ հասարակության մյուս երկու խավերի՝ հոգևոր դասի շահերը և գյուղացիության սոցիալական-դասակարգային շահերը և նրանց մեջ առաջ բերեց դժգոհություն ու պայքարի ձգտում։

Եղիշեն վկայում է, որ մինչ Հազկերտը կռվում էր քուշանների դեմ՝ զանազան տանջանքների ու հալածանքների ենթարկելով հայոց այրուձին, Հազկերտի կողմից Հայաստան է ուղարկվում Դենշապուհը աշխարհագիր անելու, իբր թե հարկերը մեղմելու և այրուձիի ծանրությունը թեթևացնելու առաջադրանքով։[2] Սակայն, Դենշապուհի աշխարհագիրը բոլորովին հակառակ հետևանքներ է ունենում։

Հետաքրքիր են Դենշապուհի աշխարհագրի հետևանքները, որը մեջ է բերում Եղիշեն.

«Առաջին, զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն։

---

[1] Տես Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 280։

[2] Տես Եղիշե, էջ 31։

Երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ։

Երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց։

Չորրորդ, զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն։

Եւ զայս ամենայն առնէր՝ զի թերևս զմիաբանութիւն քակտեսցէ, և զուիտան եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմայնակեացսն փախուցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ գիմեսցեն յօրէնս մոգուց։

Եւ ե՛ւս շարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայ վերակացու համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից. գրգռեաց յարոյց զամբաստանութիւն և ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և մեւ ևս մոգպետ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյ փառս աղաւաղեսցեն։

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս դժնեայ էին, չև էր ուրուք ձեռն արկեալ յայտնի եկեղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն։ Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց՝ այլ և աւերակաց։ Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ ըստ արմունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային՝ թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ, զիա՞րդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեաց»։[1]

Քննարկենք Եղիշեի վկայության առանձին մասերը մեկ առ մեկ։

Ինչպես երևում է Եղիշեի վկայությունից, պարսից արքունիքը սահմանում է նոր հարկային քաղաքականության սիստեմ։ Այդ նոր հարկային քաղաքականությունը մեծ չափով շոշափում էր հայ քրիստոնեական եկեղեցու և հոգևորականության շահերը։ Մինչև Հազկերտի այս նոր հարկային քաղաքականությունը, հայ եկեղեցին ազատ է եղել հարկերից, ինչպես հայ Արշակունի թագավորների օրոք, նույնպես և այդ թագավորության վերացումից հետո։ Այս շատ պարզ երևում է Տիզբոնում հայ նախարարների՝ Հազկերտ 2-րդի առաջ տված բացատրությունից, որի մեջ ասվում է. «Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ և դու ընդ հարկաւ եդիր...»։[2]

Վերանում է եկեղեցու նախկին արտոնյալ վիճակը, եկեղեցին հարկատու է դառնում։

«... զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն» բառերը ուսումնասիրողները հենց այսպես էլ մեկնում են։[3]

Քրիստոնեական հայ եկեղեցին այդ շրջանում իրենից ներկայացնում էր մի խոշոր ֆեոդալական ինստիտուտ՝ իրեն հատուկ հիերարխիայով, կալվածքներով, որին գյուղացիությունը հարկ էր վճարում («տասանորդ» և «պտղի»)։ Այնպես որ քրիստոնեական եկեղեցին հենց ինքը միջին դարերում ֆեոդալական սեփականատեր էր ճիշտ այնպես, ինչպես նշում է Էնգելսը միջնադարի

[1] Տես Եղիշե, էջ 91—92, ընդգծումները իմն են, Վ. Ն.։

[2] Նույն տեղում, էջ 58։

[3] Էմմտ. Նաև Եզ. Մամիկոնեաց, 16, Ց. Բ. 69, ծն. 2. «Ազատ եկեղեցի անկաւի ծառայութիւն հեթանոսաց. և սուրբ բահանայք նորա կոփին, չարչարին յանօրէն հարկահանացն։

կաթոլիկական եկեղեցու մասին։ «Նա,— գրում է Էնգելսը կաթոլիկ եկեղեցու մասին,— ֆեոդալական հասարակարգը շրջապատեց աստվածային շնորհի սրբազան փայլով։ Նա իր սեփական նվիրապետությունը հաստատեց ֆեոդալական օրինակի համաձայն, և վերջիվերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր, որովհետև նրան էր պատկանում ամբողջ կաթոլիկական հողատիրության մեկ երրորդ մասից ոչ պակասը»։[1]

Հայ եկեղեցու հարկատու դառնալը նշանակում էր զրկվել եկամտի մի նշանակալի մասից, և այս բանը պետք է անպայման դժգոհություն առաջ բերեր պարսից արքունիքի նկատմամբ. քրիստոնեական հայ ֆեոդալական եկեղեցին առիթի դեպքում պետք է դուրս գար պայքարի՝ հենց իր սեփական շահը պաշտպանելու համար։

Եղիշեն վկայում է, այնուհետև, որ Դենշապուհը «Միայնակեաց քրիստոնեայք. որ բնակեալ էին ի վանորայս ընդ նովին աշխարհազրով էարկ» և ապա՝ «... Սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին (հարկի տակ— Վ. Ն.) ոչ միայն շինաց, այլև աւերակաց»—այսինքն հարկի տակ են դրվել ոչ միայն եկեղեցին ու վանքերը, այլև եկեղեցականներն ու վանականները և՛ եպիսկոպոսները և՛ քահանաները՝ այն էլ ոչ միայն շեն, այլև ավերակ տեղերի։ Իսկ մինչ այդ, ոչ միայն քրիստոնեական եկեղեցին, այլև նրա պաշտոնյաներն էլ ազատ են եղել հարկատվությունից։ Այդ մասին վկայում են մատենագրական աղբյուրները։ Եվ ահա Դենշապուհի աշխարհագրի հետևանքով նրանք էլ հարկատու են դառնում։

Ուրեմն, Հազկերտի սահմանած նոր հարկային • քաղաքականությունը խիստ կերպով շոշափում էր և՛ հայ եկեղեցու և՛ ավատականության շահերը, նրանց մեջ առաջ բերելով դժգոհություն։ Եվ հայ ֆեոդալական եկեղեցին և հոգևորականությունը դժգոհ լինելով պարսից արքունիքի հարկային քաղաքականությունից, առիթի դեպքում պետք է պարսից արքունիքի դեմ ելնեին՝ հանուն իրենց սեփական շահի պաշտպանության և նախկին արտոնությունների վերականգնման։

Այսպես ուրեմն՝ հայ քրիստոնեական-ֆեոդալական եկեղեցու և հոգևորականության արտոնությունների վերացումը և նրանց հարկի տակ դնելը պարսից արքունիքի կողմից՝ իբրև ապստամբության պատճառներից մեկը։

Սակայն պարսից արքունիքի հարկային այս նոր քաղաքականությունը, անկասկած ամենից ավելի ծանր էր նստում հայ աշխատավոր ժողովրդի, շինական դասակարգի վրա։ Եղիշեն վկայում է, որ Դենշապուհի աշխարհագիրը «զհաբկ աշխարհին աւելի ծանրացոյց»,— իսկ երկրի հիմնական արտադրող ու հարկատու դասակարգը գյուղացիությունն էր։ Եղիշեն վկայում է, որ Հազկերտի օրով Հայաստանը ավելի շատ հարկ էր վճարում, քան նրա հոր (և նախորդների) ժամանակ. «իսկ զմտից և զսակից, և որ այլևս էին հարկ աշխարհին, բազմազոյն ման հարբն նորա (Հազկերտի— Վ. Ն.) երթայր յարմունիս»։[2] Պարսից արքունիքի հարկային այս նոր քաղաքականությունը, պարզ է, որ ավելի ծանրացրեց աշխատավոր գյուղացիության, առանց այն էլ ծանր դրությունը։

Որպեսզի պարզ լինի, թե ինչ նոր կեղեքումներ բերեց Հազկերտի սահ-

[1] Տես Ֆ. Էնգելս. Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, 1933 թ., էջ 18։

[2] Եղիշե, էջ 58, ընդգծումն իմն է, Վ. Ն.։

մանած նոր հարկային քաղաքականությունը, համառոտակի կանգ առնենք հայ աշխատավոր գյուղացիության, ռամիկ դասակարգի սոցիալական դրության վրա՝ այդ շրջանում։ Այդ մասին շատ աղոտ տեղեկություններ են հաղորդում մեր պատմիչները։ Աղբյուրները շատ սակավ են, քիչ բան ասող, իսկ պատմագրությունն էլ մինչև այժմ, ինչպես հարկն է, մարքսիստորեն չի մշակել եղած այդ սակավաթիվ վկայությունները։ Ֆեոդալական շրջանի հայ շինականության սոցիալական դրության ուսումնասիրությամբ զբաղվել է գլխավորապես ակադ. Մանանդյանը իր աշխատություններում, հատկապես «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» արժեքավոր աշխատության մեջ և արել մի շարք կարևոր դիտողություններ։

Այդ շրջանում հայ իրականության մեջ արտադրության հիմնական հյուղն էր գյուղատնտեսությունը, իսկ հիմնական արտադրող դասակարգը՝ գյուղացիությունը, «անազատների» դասակարգը, որն իր սոցիալական և քաղաքական դրությամբ հակադիր էր իշխող դասակարգին— «ազատներին»։ Գյուղացիության արտադրանքի յուրացմամբ էր պահպանվում թագավորական տունը, նախարարական և հոգևորական դասերը։ Գյուղացիությունը միաժամանակ հասարակության հիմնական հարկատու դասակարգն էր։ Գյուղացիությանը վերաբերվող «ծառայութիւն», «ի հարկի ծառայութիւն», «ընդ հարկօք գնել» տերմինները նշանակել են հարկատվություն, որից ազատ են եղել ազատների դասակարգի մեջ մտնող զանազան խավերը։ Մասնավորապես կարևոր են այս առթիվ Փավստոսի մոտ մի քանի անգամ կրկնվող, գյուղացիության վերաբերվող այսպիսի դարձվածքները. «Եւ բնակիչս երկրին ի հարեւի ծառայութեան կացուցանէր (Մուշեղը— Վ. Ն.)», կամ՝ «ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր», ապա և՝ «և ինքնեանք կային ի հարկի ծառայութեան», որոնք նշանակում են, ինչպես նշել է ակադ. Մանանդյանը՝ գյուղացիությանը հարկի տակ դնել, հարկատու դարձնել։ Գյուղացին հարկ է տվել և՛ թագավորին, և՛ նախարարին, և՛ եկեղեցուն։ Այդ մասին էլ բազմաթիվ վկայություններ են պահպանվել մեր մատենագրական աղբյուրներում։ Շինականները ենթակա են եղել մարմնական պատիժների. այս բանը ևս հաստատվում է մատենագրական աղբյուրների վկայություններով։ Հենվելով որոշ մատենագրական աղբյուրների վրա, ակադ. Մանանդյանը պնդում է նաև, որ Հայաստանում գյուղացիության ճորտական վիճակ է գոյություն ունեցել։ Դառն ու ծանր է եղել հայ աշխատավոր գյուղացու դրությունը. այս տեսակետից չափազանց հետաքրքիր են Եղիշեի վկայությունները։ Մի տեղ Եղիշեն նկարագրելով հայ տիկինների կրած նեղությունները, ասում է.

«Ոչ երբէր այնուհետև առաւել տէրն քան զծառայ և ոչ ազատ փափկացեալ քան զզեղջուկ վշտացեալ»։[1]

Մի ուրիշ առթիվ էլ, հայ տիկնանց վիճակի ծանրությունը ընդգծելու համար պատմագիրը դարձյալ այն համեմատում է շինականների «վշտամբերք» դրության հետ.

«Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն՝ այլ իբրև մարդք՝ որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութե-

[1] Եղիշե, էջ 86։

անցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս մանն զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց»։[1]

Եղիշեի այս համեմատությունները, ինչքան էլ նրանք գեղարվեստական լինեն, պերճախոս կերպով ցույց են տալիս, որ հայ շինականի բնորոշ ու սովորական վիճակը եղել է «վշտացեալ» ու «վշտամբերք», դրությունը, որի հետ էլ պատմիչը համեմատում է հայ նախարարների տիկինների վիճակը՝ նրա ծանրությունը ընդգծելու համար։[2]

Հայ շինականը մեծապես տուժել է «հայրենի», «սեփական» տերերի խըստագույն հարկապահանջությունից, այդ շատ պարզ երևում է, օրինակ Փավըստոսի մի վկայության մեջ, ուր նա խոսում է Ներսես կաթողիկոսի մասին.

«Եւ ամենայն աշխարհին պատուփրէր (Ներսեսը— Վ. Ն.) և գլխովին թագավորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունենալով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ աշակերտս, և սիրել իբրև զընտանիս և մի՛ անարժանս աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զչափն. յուշ առնելով, զի և նոցա տէր կոյ յերկինս»։[3]

Հայոց կաթողիկոսի այս պատվերից պարզ երևում է, որ հայ շինականի աշխատանքի արդյունքը վայելող տերերը մեծամեծ հարկեր են դրել գյուղացու վրա, շատ հաճախ խախտելով օրենքով սահմանված չափը։

Գյուղացու աշխատանքի արդյունքի մի մասն էլ յուրացնում էր վաշխառուն։ Վաշխառության մասին որոշակի գաղափար է տալիս Հովհան Մանդակունու մի ճառի հետևյալ հատվածը.

«Եւ եթե աղքատ ևս իցէ փոխապարտն, ի ծուխս և ի հոդս մաշի հանապազ անքուն և դառնաքուն ի գիշերի ննջիւն նորա տխուր և տրտում և մտայուզ ի տունջեանն շրջի, և ոչ գիտէ յոր երթայ։ Երբեմն սուղ ինչ զպախրէն կամի վաճառել, զի հատուցէ զվաշխիցն տոկոսիս, և երբեմն զանօրեն գողանալն ախորժէ զհոգիսն կորուսանել և դիմադարձ լինել աստուծոյ վասն պահանջողի վաշխի փողիցն. և երբեմն խորհի գաղտնագնաց լինել ի օտար աշխարհ։ Շրջի թափառական յաղագս պարտուցն քննութեան և ի բազում խորհրդոցն վարանիցի և մտացն շփոթելոց զաղօթսն առ Աստուած մոռանայ. և յորժամ ձայն ոտիցն հարկանի, նա ի ներքո սրտաբեկ լինի յերկիւղէն. և թէ արտաքոյ տեսանէ փոխառուն զփոխատուն, փախչի և թագչի իբրև ի տարակուսանաց աղետիցն, և սիրտն թափեալ զդողի հարկանի, և կայ գլխարկեալ և լեզուակապ և ամենևիմբ յերեսս նորա նայել ոչ իշխէ և ոչ յամարձակի, զի տոկոսիքն վաշխիցն բազմացան ի վերայ նորա, և ոչ ինչ ունի հատուցանէ և հաճել զփոխատուն»։[4]

Մանդակունու այս վկայությունից պարզ երևում է, որ հայ աշխատավոր գյուղացու վաստակը յուրացրել են անաշխատ դասերը։ Գյուղացու վաստակածի մնացորդը չի հոգացել գյուղացու կարիքները և հայ գյուղացին տնտեսական նեղ վիճակից դուրս գալու համար ստիպված է եղել վաշխառուին դիմել։ Այս միջոցն էլ աշխատավոր շինականին դուրս չի բերել անել վիճակից և

[1] Եղիշե, էջ 259։

[2] Տես նաև պրոֆ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 174։

[3] Փավստոս, «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 118, ընդգծումը իմն է, Վ. Ն.։

[4] Մանդակունի, «Ճառք», Վենետիկ, 1860, էջ 64—65։

ինչպես ցույց է տալիս Մանդակունին, գյուղացին նոր ու ավելի ծանր պարտքերի տակ է ընկել։

Բայց հայ գյուղացին համբերությամբ չի տարել իր ճնշված վիճակը, նա ըմբոստացել է, պայքարել իրեն շահագործողների դեմ։ Այդ պայքարի մասին մեր մատենագրական աղբյուրները (5-րդ դարի) գրեթե ոչինչ չեն հաղորդում։ Սակայն, նրանց մոտ պահպանված հատուկտորներից, գյուղացիության հասցեին ասված, հաճախ նույնիսկ հայհոյական բառերից, որոնք գործ են ածում իշխող դասակարգի ներկայացուցիչ պատմիչները, կարելի է որոշակի դաղափար կազմել կեղեքվող ժողովրդի՝ իշխող դասակարգի դեմ մղած դասակարգային պայքարի մասին։ Այսպես. Խորենացու «Ողբի» մեջ հաղորդվում է ժամանակի հայ հասարակության ամեն մի դասի ու դասակարգի մասին, իսկ «ժողովրդականների» մասին ասվում է.

«Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, այրեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ»։[1]

Այստեղ ժողովրդի հասցեին գործածված Խորենացու բառերը, հատկապես «վէսք», «մեծախօսք», «այրեցողք», մեր կարծիքով պետք է մեկնվեն այսպես— որ ժողովրդականները հպարտ են եղել, հաճախ չեն ենթարկվել իրենց տերերին, («վէսք»), նրանք հլու հնազանդ չեն եղել իրենց իշխողներին, այլ պատասխանել են նրանց, իրենց իրավունքներն են պաշտպանել («մեծախօսք»), ապա և՝ վրեժ են լուծել իրենց շահագործող տերերից՝ կեղեքումի ու շահագործման համար, այրել են նրանց ունեցվածքը («այրեցողք»), կամ՝ զանազան վնասներ են հասցրել, նաև սպանել են իրենց տերերին («վնասակարք»)։

Փավստոսը Արշակավանի մասին խոսելիս, թվում է թե ովքեր եկան այդ քաղաքը, ի թիվս մյուս եկողների եկան նաև՝

«Բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր արկանէին»։[2]

Ուրեմն՝ ժամանակին նեղվելով ու զայրանալով իրենց տերերի վրա, ծառաները հափշտակել են իրենց տերերի ունեցվածքը։ Սա արդեն ֆեոդալիզմի էպոխային հատուկ դասակարգային պայքարի արտահայտման շատ տարածված ձևերից մեկն է եղել ոչ միայն Հայաստանում։ Դասակարգային պայքարի առկայության մասին՝ 5-րդ դարում, մի կարևոր վկայություն է պահպանվել Հովհան Մանդակունու «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառում. ժամանակի կաթողիկոսը մեծ ատելությամբ է խոսում աշխարհիկ թատրոնների մասին, որոնք ըստ երևույթին շատ սիրված են եղել ժողովրդի կողմից,[3] և նա խրատ է տալիս մարդկանց՝ չհաճախել այդ թատրոնները.

«... Զի անդի («անօրէն» և «դիվական» թատրոններում— Վ. Ն.) յորդորին կուսանք ի պոռնկութիւնս, ամուսնաւորք ի շնութիւնս... Անդի որդիք ի հաբռնց ըշնամանին և ծառայք ի տէրանց...»։[4]

Ինչպես երևում է Մանդակունու վկայությունից, այդ թատրոնները ատելի են եղել հոգևորականությանը ոչ միայն իրենց աշխարհիկ բնույթի

---

1 Խորենացի, «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 374—375։
2 Փավստոս, էջ 166, ընդգծումը իմն է, Վ. Ն.։
3 Հովհան Մանդակունի, Ճառք, Վենետիկ, 1836, էջ 125։
4 Նույն տեղում, ընդգծումը իմն է, Վ. Ն.։

պատճառով, այլև նրանք ունեցել են որոշակի սոցիալ-քաղաքական բովանդակություն. նրանցում, ինչպես երևում է, մղվել է ծառաների՝ իրենց տերերի դեմ պայքարելու քարոզը:

Ֆեոդալիզմի շրջանում աշխատավոր դասակարգի պայքարը շատ հաճախ հանդես է եկել կրոնական զգեստով, աղանդների ձևով:

Այստեղ անհրաժեշտ է հիշել Ֆ. Էնգելսի մի ցուցումը՝ միջնադարում ֆեոդալիզմի դեմ ուղղված շարժումների կրոնական արտաքին կեղևի մասին: Էնգելսը գրել է.

«Մտավոր գործունեության բոլոր բնագավառների վրա տարածվող աստվածաբանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում:

Պարզ է, որ այդ պայմաններում այն բոլոր ընդհանուր բնույթ կրող հարձակումները, որ կատարվում էին ֆեոդալիզմի և ամենից առաջ եկեղեցու դեմ, ինչպես նաև ռևոլուցիոն, հասարակական և քաղաքական բոլոր ուսմունքները, միաժամանակ նաև աստվածաբանական հերետիկոսություններ պիտի լինեին: Տիրող հասարակական հարաբերությունների վրա հարձակումը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ էր հեռացնել սրբության այն շղարշը, որով սքողված էին այդ հարաբերությունները»:[1]

Հայոց պատմության քննարկվող շրջանի աղանդներից, որոնք ունեցել են սոցիալական բովանդակություն, հայտնի են մծղնեականների և բարբարիտոնների աղանդները, որոնք ժխտում էին եկեղեցին, հավասարություն էին քարոզում, առաջարկում էին ստեղծել կրոնական համայնքներ՝ հավասարության հիմունքներով, ծառաներին հորդորում էին փախչել տերերի մոտից և այլն:

Ինչպես երևում է մատենագրական աղբյուրների վկայությունների վերոհիշյալ համառոտ քննությունից, ծանր ու «վշտացեալ» է եղել հայ աշխատավոր գյուղացիության սոցիալական դրությունը: Նա իր վրա կրել է և՛ «սեփական», և՛ օտար՝ պարսից իշխողների ճնշման լուծը: Նրա վիճակը ավելի է ծանրանում 451 թվի ապստամբության նախօրյակին: Հազկերտի նոր հարկային քաղաքականությունն ամենից ավելի ծանր է նստում հայ աշխատավոր գյուղացիության վրա: Այս հանգամանքը խոշոր չափով գրավում է Եղիշեի ուշադրությունը: Նա, իհարկե, իր ժամանակին շատ լավ զգացել է, որ աշխատավոր ժողովրդի՝ պարսից արքունիքի դեմ մղած հերոսական պայքարի հիմնական պատճառը օտարի հարկային ծանր քաղաքականությունն է (թեև Եղիշեն իր բացատրությունների մեջ հիմնականը համարում է կրոնական հալածանքը, բայց այն կարևոր փաստերը, որ նա բերում է, հերքում են հենց իր իսկ այս տեսակետը): Եղիշեն ծանր հարկային քաղաքականության մասին մի անգամ հիշատակելով չի բավարարվում, նա նորից ու նորից անդրադառնում է այդ հարցին, նորից շեշտում որ պարսիկները «... ոտի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին... Նա բնաւ ով իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և ոսկից, բաժից և հասից,[2] լերանց և

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940 թ. էջ 46:

[2] Հարկի այս տեսակների—«մուտ», «ոսկ», «բաժ», «հաս»—իսկական բովանդակությունը պատմաբանների կողմից դեռևս վերջնականապես չի պարզված. այս մասին տես ակադ. Մանանդյանի «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» ուշա-

դաշտեաց և մայրեաց»— վրդովված ու սրտնեղած քացականչում է պատմիչը։ Եղիշեի այս վկայությունից, իմիջիայլոց, կարելի է եզրակացնել, որ Դենշապուհի օրով հարկերը կրկնապատկվել են («ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին»)։ Բացի այդ, ինչպես տեսնում ենք, բացի հարկի հիմնական տեսակներից (մուտ, սակ, բաժ, հաս) հարկեր են նշանակվել նաև լեռների, դաշտերի և անտառների վրա։

Հարկերի ծանրությունը պատճառ է դառնում այն բանին, որ գյուղացին չի կարողանում դրանք ժամանակին վճարել և պարսիկ պաշտոնյաները դիմում են հարկերի հավաքման կամայական ու բիրտ մեթոդների։ Այս առթիվ էլ Եղիշեն վկայում է, որ հարկահավաքները «ոչ ըստ արքունի արժանավորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով»։[1]

Այս բոլորը, պարզ է, որ ավելի են խորացնում հայ ժողովրդի դժգոհությունը և բորբոքում նրա զայրույթը օտար տիրապետության դեմ։ Հայ աշխատավոր գյուղացու անտանելի վիճակը, պարզ է, որ վաղ թե ուշ պետք է նրան հաներ պայքարի՝ ընդդեմ պարսկական ֆոնակալության, նա պետք է ելներ պայքարի՝ օտարերկրյա կեղեքիչների դեմ՝ նախ և առաջ իր դասակարգային-սոցիալական շահերի պաշտպանության համար։

Այսպես ուրեմն՝ պարսից արքունիքի հարկային ծանր քաղաքականությունը, որն ամենքից ավելի ծանրացնում էր հայ աշխատավոր գյուղացու առանց այն էլ անտանելի վիճակը՝ բորբոքելով նրա զայրույթն ու ցասումը, իբրև 451 թվի ապստամբության պատճառներից մեկը։

Բայց, բացի այս, դասակարգային շահը, նրան հերոսական կռվի էր մղում և երկրի պաշտպանության գաղափարը, հայ ժողովրդի ինքնուրույն գոյության պաշտպանության գաղափարը։

Բացի վերը հիշվածը, Հազկերտի քաղաքականությունը ուրիշ կողմեր ևս ունի, որոնց վրա էլ համառոտակի կանգ առնենք։ Եղիշեն թվելով աշխարհագրի հետևանքները, «ամենաչարագույնը» համարում է հետևյալը. «... քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից. գրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և մեւս ևս մոգպետ դատաւոր աշխարհին, զի եկեղեցւոյ փառս աղաւաղեսցի»։

Այստեղ պատմիչը շեշտում է երկու հանգամանք։ Հազկերտը հազարապետության պաշտոնը խլում է հայերից և հայ հազարապետի փոխարեն նշանակում է մի պարսկի, և երկրորդ դատելու իրավունքը վերցնում է եկեղեցուց և տալիս պարսիկ մոգպետին։ Սրանք հայերի վրա պարսկական լուծը ծանրացնելու նոր միջոցներ են։ Հազարապետության պաշտոնը խիստ կարևոր մի պաշտոն էր ֆեոդալական Հայաստանի պայմաններում։ Հազարապետությունը մեկն էր ամենակարևոր գործակալություններից— որոնք են՝ «մարզպետութիւն», «թագկապ ասպետութիւն», «հազարապետութիւն», «մաղխազութիւն», «սպարապետութիւն» և «Մեծ դատաւորութիւն»։[2] Հազարապետը ղեկավարում էր հարկերի

գրքով աշխատությունը (տեղեկագիր Հ. Խ. Ս. Հ. Գիտության և Արվեստի ինստիտուտի. 1926 թ. № 1), Ն. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» գրքի 15-րդ գլուխը և Միքայել Փորթուգալի «Եղիշեի վարդապետի վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատությունը, էջ 218, ծանոթությունը և այլուր։

[1] Եղիշե, էջ 32։

[2] Պրոֆ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 61։

բաշխումն ու գանձումը, երկրի ֆինանսական, շինարարական ու տնտեսական գործերը — այնպես որ նա բացառիկ մեծ գեր էր կատարում երկրի տնտեսական կյանքում, ինչպես այդ երևում է մեր մատենագիրների վկայություններից։[1] Պարզ է, որ այսպիսի մի կարևոր պաշտոնի խլելը հայերից, մի նոր հարված էր հայերի պետական ինքնուրույնության վերջնական վերացման ուղղությամբ։ Հայ եկեղեցական բարձր իշխանությունը մինչև Հազկերտ 2-րդը ունեցել է և դատավարական իրավունք,[2] որն ըստ երևույթին մի շատ շահավետ պաշտոն էր, որից հիմա Հազկերտը զրկում է հայ եկեղեցուն, այն հանձնելով պարսիկ մոգպետին։ Այս հանգամանքը, անշուշտ, պետք է պարսկական արքունիքի դեմ ունեցած հայ եկեղեցու և հոգևորականության դժգոհության վրա մի նոր դժգոհություն էլ ավելացներ։ Մյուս կողմից, դատական՝ իշխանության անցումը պարսիկ մոգպետի ձեռքը այն նշանակությունը պետք է ունենար, որ այսուհետև Հայաստանում պետք է գործեին պարսկական դատական օրենքները։ Սա ևս մի նոր հարված էր Հայաստանի ներքին և քաղաքական ինքնուրույնությանը, սրա միջոցով է՛լ Հազկերտը, անպայմանորեն ձգտում էր դյուրացնել հայկական պետականության մնացորդների ոչնչացումը և հայերի պարսկացումը։

Այսպիսով՝ Հազկերտ 2-րդի քաղաքականությունը իր բոլոր կողմերով շոշափում էր հայ հասարակության բոլոր դասակարգերի և դասերի շահերը, մի կողմից ռամկության, մյուս կողմից՝ նախարարական դասի և եկեղեցու ու հոգևորականության շահերը, նրանց մեջ աճեցնելով զայրույթ ու դժգոհություն պարսից արքունիքի նկատմամբ։ Նրանք, հասկանալի է, որ առիթի դեպքում պայքարի մեջ պետք է մտնեին՝ ընդդեմ պարսկական արքունիքի՝ ամենից առաջ ամեն մեկը իր դասային կամ սոցիալական շահերը պաշտպանելու համար։

Բացի այդ, Հազկերտի քաղաքականությունը, ինչպես տեսանք, սպառնում էր հայերի պետական ինքնուրույնությանը և ժողովրդի ինքնուրույն գոյությանը — իսկ սա արդեն նոր թափ պետք է հաղորդեր հայերի մղած պայքարին, բոլոր խավերի մեջ էլ առաջ բերելով երկրի, ժողովրդի ինքնուրույն գոյության պաշտպանության բուռն ձգտումը։

Այսպես ուրեմն, պարսկական արքունիքի՝ հայ պետականության ինքնուրույնության մնացորդների և հայ ժողովրդի ինքնուրույն գոյության վերացնելու քաղաքականությունը՝ իբրև հայերի ապստամբության պատճառներից մեկը։

Եղիշեն՝ հայերի ապստամբության քաղաքական և սոցիալական պատճառները լուսաբանող մանրամասն փաստերը հաղորդելուց հետո միայն անցնում է պարսկական արքունիքի կողմից հայերին արված դավանափոխության առաջարկին։ Հազկերտը ոչ թե ամեն ինչ սկսում է դավանափոխության պահանջով, այլ, ինչպես մենք տեսանք, մինչ այդ նա մի շարք կարևոր միջոցառումներ ձեռնարկեց, որի նպատակն էր՝ երկրի դիմադրողականության քայքայումը։ Նա խնամքով նախապատրաստում էր իր վերջնական մտադրության իրագործումը. այդ մտադրությունն էր — վերջնականապես նվաճել Հայաստանը՝ այն դարձնելով իր ընդարձակ տերության մի մարզը, հայերի ինքնուրույն գոյու-

[1] Այս մասին տես Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, 69—73 էջերը։

[2] Նույն տեղում, էջ 76—79։

թյանը վերջ տալ՝ նրանց պարսիկների հետ ձուլելով։ Հայերին ասիմիլացիայի ենթարկելու և բյուզանդական ազդեցությունից կտրելու գործում մի խոշընդոտ էլ կար՝ քրիստոնեական կրոնը։ Սակայն, ինչպես տեսանք, պարսկական արքունիքի քաղաքականությունը արդեն բորբոքել էր հայ հասարակության բոլոր դասերի ու դասակարգերի զայրույթը. նրանցից ամեն մեկն էլ օպոզիցիա էր՝ պարսկական արքունիքի դեմ։

Անհրաժեշտ է նշել, որ կրոնական հարցը, որպես ինքնակա հարց, առհասարակ պատմության մեջ գոյություն չի ունեցել. այն ինքնակա հարց չէ նաև հայ իրականության համար։ Կրոնական հարցը, միշտ էլ հանդես է եկել իբրև քաղաքական հարցի միայն մի, այն էլ ածանցական մասը։ Այդ պատերազմում ևս, ինչպես հաստատում են պատմական փաստերը, էականը քաղաքականն էր— Հայաստանի վերջնական նվաճումը նրա աշխարհագրական դիրքի օգտագործումը և հայերի ասիմիլացիան։

Այն, որ իսկապես Հայաստանի նկատմամբ Պարսկաստանի իսկական նպատակը սոսկ քաղաքականն էր, շատ պարզ երևում է Փարպեցու մի վկայությունից. Մփհրներսեհը Հազկերտին տված խորհրդի մեջ ասում է.

«Վասն զի դուք ինքնին գիտէք և ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թե որպէս մեծ է և պիտանի, և մօտ և սահմանակից է կայսեր իշխանութեանն, և զօրէնս և պաշտօն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի։ Եւ եթէ և մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա, և ընդելնուն, և կարեն ճանաչել, եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճանապարհ եկեսցեն՝ այնուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհս, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մեծին և հեռանան ի բաց։ Եւ լինի այնուհետև աշխարհն ընդ մեր սերտ սիրով և միաբանութեամբ։ Եւ յորժամ Հայք սկսցին մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են»։[1]

Կրոնական հարցը պարսից արքունիքի համար միայն այնչափով նշանակություն ուներ, որչափով որ այն վերաբերվում էր Հայաստանը հավատակից Բյուզանդիայի ազդեցությունից կտրելուն։ Որ կրոնական մոլեռանդությունը այնպիսի տեսք չի ունեցել հինգերորդ դարում, ինչպես ներկայացրել են մեր հոգևորական պատմիչները, երևում է հենց մեր պատմիչների վկայություններից։ Բազմաթիվ են այն փաստերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպես հայ այս կամ այն նախարարը կամ խոշոր գործիչը դավանափոխ է եղել, երբ այդ պահանջել է տվյալ նախարարի կամ նախարարության ու երկրի քաղաքական շահը։ Վերցնենք հենց թեկուզ Փարպեցու այդքան փառաբանված քրիստոնյա հերոսին— Վահան Մամիկոնյանին. չէ՞ որ նա հենց իր և նախարարության շահը նկատի ունենալով, Փարպեցու վկայությամբ՝ «երթեալ ի դուռն՝ տկարանայր ի հաւատն»։[2]

Վերցնենք մի այլ, այնքան ծեծված՝ նախարարների ուրացության փաստը Տիզբոնում (որի մասին մի. փոքր այլ կերպ են պատմում Եղիշեն և Փարպեցին, և ճշմարտությունը, մեր կարծիքով, Եղիշեի կողմն է)։ Եղիշեն այդ դեպքը պատմում է ոչ իբրև մի արտակարգ բան, նույնիսկ նա դեպքը պատկերում է իրեն ոչ հատուկ որոշակի անտարբերությամբ։[3] Եղիշեն շատ լավ ցույց է տա-

[1] Ղ. Փարպեցի, էջ 87—88, ընդգծումներն ամենուրեք իմն են, Վ. Ն.։
[2] Նույն տեղում, էջ 256, (գրվագ Գ)։
[3] Տես Եղիշե, էջ 62—64։

լիս, որ ինչպես հայոց, նույնպես և վրաց ու աղվանից երկրների մեծամեծները, որպեսզի կարողանան ժամանակ շահել և երկիրը ապաստամբության համար նախապատրաստել, նույնիսկ առանց երկար տատանվելու համաձայնվում են կատարել Հազկերտի պահանջը— թողնել քրիստոնեությունը և ընդունել զրադաշտականությունը։ Երկրորդական է այն հանգամանքը, թե այդ ուրացությունը կեղծ էր, թե անկեղծ, որովհետև քրիստոնեական վարդապետությունն առհասարակ մեծ մեղք է համարում ուրացությունը, այլ սա առավել արտահայտիչ ձևով ցույց է տալիս, որ այդ շրջանում քրիստոնեական հավատի պաշտպանությունը այնպիսի ֆանտաստիկ բնույթ չի կրել, ինչպիսին ներկայացնում են մեր պատմիչները՝ հենց իրենք՝ Եղիշեն ու Փարպեցին, և նրանց հետևողությամբ էլ կղերական պատմագրության ներկայացուցիչները։

Միանգամայն ճիշտ է նկատում Դեմիրճյանն իր «Վարդանանց պատերազմը» հոդվածում, թե «... հայ նախարարության համար կրոնական դեմոնստրացիան բխում էր քաղաքական սկզբունքներից և ձգտումներից՝ իբրև իշխանական դասի նպատակադրումն։ Թե որքան իրավացի է այս դիտողությունը՝ բավական է մտաբերենք, որ ուրացությունը՝ կեղծ կամ անկեղծ բավականին կենցաղային երևույթ էր հայ իշխանների մեջ, որ հայ նախարարները Տիզբոնում հանձն առան առերես ուրացությունը (անստվոր քայլ հայ վկայաբանության մեջ), որով ցույց տվին իրենց ոչ այնքան էլ խիստ կրոնականությունը, և այդ արին քաղաքական նկատառումներով... Այսպիսով, Վարդանի և մյուսների այսօրինակ քայլերի մեջ չի կարելի տեսնել ջերմեռանդ և ուղղափառ քրիստոնյաների սկզբունքներ, այլ քաղաքական նպատակների համար մարտնչողների հայացքը իրերի մասին»։[1]

Եթե այս այսպես է, կնշանակի, վերջնականապես մի կողմ պետք է դրվի կրոնի հարցին այնքան մեծ տեղ տալը 451 թվի պատերազմի մեջ։ Ուրեմն և ճիշտ չէ հենց ինքը, Դեմիրճյանը, որ միաժամանակ պնդում է, թե «հենց Վարդանանց պատերազմը ինքը՝ ինչպես և ներկայացնում է Եղիշեն՝ նահատակության պատմություն է».[2] Եղիշեն, ճիշտ է, այդպես է ներկայացնում, բայց միաժամանակ հենց իր՝ Եղիշեի բերած փաստերը հերքում են նրա եզրակացությունը։

Եթե քրիստոնեական կրոնը ջերմեռանդությամբ չէր պաշտպանվում նախարարների կողմից, ապա ինչո՞ւ պետք է ենթադրել, որ այն առավել ջերմեռանդությամբ է պաշտպանվել ռամիկ դասակարգի կողմից, որի համար, վերջին հաշվով, քրիստոնեական եկեղեցին ու հոգևորականությունը նույնպիսի կեղեքողներ էին ,որպիսիք գեղդալն ու վաշխառուն։ Կղերական պատմագրությունը պնդում է, թե հայ աշխատավոր ժողովուրդը պարսկական արքունիքի դեմ պայքարի ելավ հանուն քրիստոնեական հավատի պաշտպանության։ Այս տեսակետը հիմնված է այն թյուր ու հակագիտական կարծիքի վրա, թե քրիստոնեական եկեղեցու և հայ ժողովրդի շահերը այդ դարում համընկնում էին և որ քրիստոնեական եկեղեցին հայ ժողովրդի շահերի հետևողական պաշտպանն էր։ Այսպես մտածում էր Միքայել Փորթուգալը, երբ գրում էր.

---

[1] Դ. Դեմիրճյան, «Վարդանանց պատերազմը», Սովետական գրականություն, 1943 թ., № 3, էջ 122, ընդգծումն իմն է, Վ. Ն.։

[2] Նույն տեղում, էջ 117։

«Քրիստոնեությունն ի Հայաստան, ինչպես և Միջին դարուց մեջ յԵվրոպա, անքանական ուժո հափշտակութեանց և հարստահարութեանց տեղ հավասարության սկզբունքը քարոզելով ու զրկյալ և խեղճ ժողովրդյան միտքը արթնցնելով ու բարձրացնելով, կը բարձրացներ նաև անոնց նյութական վիճակը ու հիմանց կքանդեր նախարարաց զորությունը։ Մյուս կողմանե՝ այդ նոր վարդապետությունը ներկայացնող եկեղեցականք՝ որք ինքզինքին ազատաց կարգը դասեր էին և նոցա ամենայն առանձնաշնորհությունքն ունեին ժողովրդյան անհամեմատ, մեծագույն, բայց զրկյալ մասին պաշտպան և ազատարար կանգնելով նախարարաց դեմ, բնականաբար նորա (այսինքն՝ ժողովրդի— Վ. Ն.) իսկական տերն ու հրամանատարը կըլլային»։[1]

Այս կարծիքը կղերական պատմագրությանն է հատուկ, և շատ զարմանալի է, երբ մեր օրերում ոմանց կողմից պաշտպանվում է։

Մենք բոլորովին մտադիր չենք անտես առնել քրիստոնեության կատարած դրական դերը հայ ժողովրդի, հատկապես հայ կուլտուրայի պատմության մեջ։ Անպայմանորեն, քրիստոնեության տարածումը Հայաստանում ունեցել է իր դրական հետևանքները։ Նա որոշ չափով նպաստեց միապետականության ամրապնդմանը։ Բացի այդ, նա նպաստեց կուլտուրայի զարգացմանը, հայերին հաղորդակից արեց բավականին բարձր կուլտուրայի մակարդակին հասած ժողովուրդների հետ։ Հոգևորականության ձեռքով հենց բաց արվեցին բազմաթիվ դպրոցներ, տարածվեց գրագիտությունը հայոց մեջ, այդ քրիստոնյա հոգևորականներից շատերը մասնակից եղան մեր կուլտուրայի ամենահարուստ բնագավառներից մեկի՝ մատենագրության ստեղծմանը։ Մեր մատենագիրներից շատերը՝ Փավստոս Բուզանդը, Մանդակունին, հայոց գրերի ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտոցը և ուրիշները, խոշոր դեր կատարեցին հայ ժողովրդի կուլտուրայի առաջընթացի գործում։

Այս բոլորը ճիշտ է, սակայն չի ասում այն մասին, թե քրիստոնեական կրոնը հայ ժողովրդի ինքնուրույն գոյության պահպանման հիմքն է եղել, թե իբր նրա պաշտպանությամբ էր, որ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը։ Հայ ժողովուրդը գոյություն ուներ քրիստոնեությունը ընդունելուց դեռ շատ դարեր առաջ։ Առհասարակ հակագիտական է պնդել, թե որևէ ժողովրդի գոյության պահպանման հիմքն է եղել այս կամ այն կրոնը։

Հոգևորականությունը, անպայմանորեն, որոշակի դեր կատարել է 451 թվի հայ պարսկական պատերազմի ժամանակ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու, նրան օտարերկրյա կեղեքիչների դեմ պայքարի դուրս բերելու գործում, մանավանդ, որ եկեղեցին ու հոգևոր դասը պայքարի մեջ մտան, նախ և առաջ պարսից արքունիքի քաղաքականությունից խիստ դժգոհ լինելու պատճառով։ Եկեղեցին և հոգևոր դասը պարսից արքունիքի դեմ մղվող պայքարի մասնակիցներն էին։ Նրանք ոչ մի ջանք չէին խնայում, նախ և առաջ իրենց դասային և դասակարգային շահը նկատի ունենալով, կազմակերպված, ուժեղ բնույթ տալ պարսից արքունիքի դեմ մղվող պայքարին։ Հենց այս ժամանակից էլ սկսվել է այն գաղափարի պրոպագանդան, թե իբր հայ ամբողջ ժողովուրդը պայքարի է ելել պարսից դեմ, հանուն իր հավատի, հանուն կրոնի

---

[1] Մ. Փորթուգալ, Եղիշեի վարդապետի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, և քննադատություն, Վենետիկ, 1903, էջ 44—45։

պաշտպանության՝ ընդդեմ զրադաշտականության։ Այս գաղափարը սկիզբ է առել Եղիշեից և Փարպեցուց։ Եկեղեցին և հոգևոր դասը, ժամանակին աշխատել են այդ պայքարին կրոնական գունավորում տալ (և ոչ թե հայ ժողովուրդն է պայքարի համար քրիստոնեական կրոնը դրոշ դարձրել, ինչպես կարծում են որոշ ուսումնասիրողներ), ցանկանալով օգտագործել ժողովրդի ուժը։

451 թվի պատերազմին կրոնական գունավորում տալու և կրոնի դրոշի տակ ժողովրդին միավորելու եկեղեցու ձգտմանը խոշոր չափով նպաստեց այն հանգամանքը, որ իրոք Հազկերտը դավանափոխության առաջարկություն արավ, և ձգտում էր հայերի, այնուհետև վրացիների ու աղվանների մեջ զրադաշտականությունը տարածելով այդ ժողովուրդներին դուրս բերել կամ հեռու պահել հունական ազդեցությունից և աստիճանաբար ենթարկել ասիմիլացիայի։ Հետևաբար, դավանանքի հարցը պարսից արքունիքի համար նպատակ չի եղել, այլ միջոց՝ այն էլ միջոցներից միայն մեկը։ Հազկերտը (և նրա նախորդներն ու հետնորդները) ըմբռնում էին, որ միակրոն ժողովուրդներին տիրելը ավելի հեշտ է, ավելի քիչ ջանքեր կպահանջի։

Այժմ արդեն մենք մոտեցանք 451 թվի՝ հայերի կողմից պարսիկների դեմ մղվող պատերազմի բնույթի պարզաբանմանը։ Ի՞նչ պատերազմ պետք է կոչել այն՝ հաշվի առնելով նրա հիմնական շարժիչ ուժերն ու նպատակը։

Քրիստոնեական եկեղեցին և կղերականությունը շարունակ ձգտել են այն խլել հայ ժողովրդի ձեռքից և դարձնել եկեղեցու ու կրոնի սեփականությունը։ Ուսումնասիրողների որոշ մասը,— գլխավորապես հայ տրադիցիոն պատմագրությունը,— հետևելով մեր հնագույն մատենագիրներին՝ Եղիշեին ու Փարպեցուն, այդ պատերազմը կոչել են կրոնական, ձգտելով ցույց տալ, որ հայերի հերոսական պայքարը զուտ կրոնական բնույթ ուներ, որ երկու կողմից էլ այդ պատերազմը իբր թե մղվում էր զուտ կրոնական դրդապատճառներով։ Այս կարծիքն արտահայտել են Միքայել Չամչյանը, Մ. Օրմանյանը, Հ. Գաթրճյանը, Գ. Զարբհանալյանը, Ստ. Պալասանյանը և ուրիշներ։ Սակայն այդ ուսումնասիրողներից ոչ մեկն էլ լուրջ գիտական փաստերով չի հիմնավորել իր հայացքը։ Եվ չի էլ կարելի հիմնավորել։ Պատմությունն ուսուցանում է, որ զուտ կրոնական դրդապատճառներից ոչ մի պատերազմ չի առաջանում։ Կարևոր է այս տեսակետից հիշել մարքսիզմի կլասիկների հետևյալ դրույթը.

«... Բարոյականությունը, կրոնը, մետաֆիզիկան և իդեոլոգիաների մյուս տեսակներն ու նրանց համապատասխանող գիտակցության ձևերը կորցնում են ինքնուրույնության տեսքը։ Նրանք չունեն պատմություն, չունեն զարգացում։ Մարդիկ զարգացնելով նյութական արտադրությունը և իրենց նյութական հարաբերությունները, փոփոխում են տվյալ իրականության հետ միասին նաև իրենց մտածողությունը և մտածողության արդյունքները»[1] Ոչ թե գիտակցությունն է որոշում կեցությունը, այլ կեցությունն է որոշում գիտակցությունը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, կրոնը ինքնուրույն պատմություն չունի։ Ուրեմն չեն էլ կարող լինել զուտ կրոնական պատերազմներ. պատմության մեջ այսպես կոչված, կրոնական պատերազմները, իսկապես կրոնական չեն, այլ քաղաքական բնույթ ունեն։ Պատմության մեջ ամենամեծ կրոնական

[1] К. Маркс и Ф. Энгельс, Немецкая идеология, 1935, стр. 17. ընդգծումը է. Վ. Ն.։

համարված պատերազմը— խաչակրաց արշավանքը, որին մասնակցում էին կաթոլիկական Եվրոպայի երկրները, մղվում էր ոչ թե կրոնական նպատակով, այլ իր բնույթով զուտ քաղաքական էր,— նվաճողական։ Կաթոլիկ եվրոպացիների նպատակը չէր արևելքի քրիստոնյաներին փրկելը, այլ՝ նվաճել Արևելքի երկրները, ստրկացնել ժողովուրդներին։

451 թվի պատերազմը ևս կրոնական չէր իր բնույթով, ինչպես ցույց տվինք, կրոնական հարցը նրանում քաղաքական հարցի մի մասն էր միայն, այն էլ ենթակայական։ Դավանանքի պաշտպանության գաղափարը չէր, ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, հայ ժողովրդին ոտքի հանող հիմնական պատճառը։

Մի այլ խումբ ուսումնասիրողներ այդ պատերազմը համարել են ֆեոդալական-նախարարական ապստամբություններ՝ ընդդեմ պարսից արքունիքի, պարսից թագավորի, որը հայ նախարարների գլխավոր սյուզերենն էր։ Տեսանք, որ իրոք, հայ նախարարությունը— աշխարհիկ ֆեոդալական հիմնական դասակարգը դժգոհ էր պարսից արքունիքից, որովհետև Հաղկերտի քաղաքականությունը շոշափում էր նրա ֆեոդալական շահերը, Հաղկերտը խլում, ոչընչացնում էր նրա ֆեոդալական-ավատական արտոնությունները, այլասեռում էր նրան իբրև դասակարգ, ձգտում էր փաստորեն նրա գոյությանը վերջ տալ, և նա պայքարի ելավ պարսից արքունիքի դեմ՝ առաջին հերթին իր շահերի պաշտպանությունը նկատի ունենալով։ Հայ նախարարության զգալի մասը հերոսաբար մարտնչեց այդ պատերազմում, սակայն արդյո՞ք նախարարների ֆեոդալական իրավունքների պաշտպանության համար էր, որ պատերազմի բախտը որոշող ժողովուրդը հերոսական պայքարի ելավ պարսից արքունիքի դեմ։ Իհարկե ոչ։ Ուրեմն, չժխտելով հանդերձ նախարարական դասի մասնակցությունն ու դերը այդ պատերազմում, այնուամենայնիվ, ինչպես նկատում են ուսումնասիրողներից ոմանք (Հ. Հարությունյանը և ուրիշները), չի կարելի այն ֆեոդալական-նախարարական ապստամբություն կոչել պարսից դեմ՝ ինչպես այդ անում են Մ. Գարագաշյանը,[1] ակադ. Հ. Մանանդյանը։[2]

Պատերազմի ոգին էր կազմում հայ աշխատավոր ժողովուրդը, առանց նրա մասնակցության, պարզ է, որ պատերազմը կլիներ նախարարների ու մի խումբ հոգևորականների ձեռքով սարքված խղճուկ ու ողորմելի մի ապստամբություն։ Պատերազմին թափ հաղորդեց ու պարսից արքունիքը սասանեց պարսկական օտարերկրյա ճնշման լուծն իր վրա կրող հայ աշխատավոր ժողովուրդը։ Հայ ժողովուրդն էր պատերազմի հիմնական ուժը, ժողովրդի շնորհիվ է, որ հերոսացան Վարդանն ու ապստամբության մյուս ղեկավարները։ Ժողովուրդը պայքարի մեջ մտավ ո՛չ հանուն քրիստոնեական եկեղեցու և հոգևոր դասի շահերի պաշտպանության, և ոչ էլ հանուն հայ նախարարների ֆեոդալական իրավունքների պաշտպանության, այլ նախ և առաջ՝ հանուն իր դասակարգային սոցիալական շահի պաշտպանության՝ պարսից արքունիքի անասելի ծանր հարկային քաղաքականությունից և օտարերկրյա զավթիչների կեղեքումներից ազատվելու համար։ Ժողովուրդը սկզբում պատերազմի ելավ տարերայնորեն, հետո միայն իշխող դասակարգը կանգնեց նրա պայքարի գլուխը։

[1] Տես նրա «Ազգային պատմություն Հայոց», հատոր Դ, էջ 111 և հետ։
[2] Տես նրա Ֆեոդալիզմը հին Հայաստանում աշխատությունը, էջ 280։

Լենինը գրել է.

«Իսկ ինչպե՞ս գտնել պատերազմի «իսկական էությունը», ինչպե՞ս որոշել այն։ Պատերազմը քաղաքականության շարունակությունն է։ Պետք է ուսումնասիրել պատերազմին նախորդող քաղաքականությունը, քաղաքականություն, որը բերել-հասցրել է պատերազմի։ Եթե քաղաքականությունը եղել է իմպերիալիստական, այսինքն՝ ֆինանսական կապիտալի շահերը պաշտպանող, գաղութները և ուրիշ երկրները կողոպտող ու ճնշող քաղաքականություն, ապա դրանից բխող պատերազմն էլ իմպերիալիստական պատերազմ է։ Եթե քաղաքականությունը եղել է ազգային- ազատագրական, այսինքն՝ ազգային ճնշման դեմ մասսայական շարժումն արտահայտող քաղաքականություն, ապա այդպիսի քաղաքականությունից բխող պատերազմը ազգային-ազատագրական պատերազմ է»։[1]

Պարտիայի պատմության համառոտ դասընթացում կարդում ենք. «Բոլշևիկները գտնում են, որ պատերազմը երկու տեսակ է լինում—

ա) Արդարացի, ոչ հափշտակողական, ազատագրական պատերազմ, որի նպատակն է կամ պաշտպանել ժողովուրդն արտաքին հարձակումից և նրան ստրկացնելու փորձերից, կամ ազատագրել ժողովուրդը կապիտալիզմի ստրկությունից, կամ, վերջապես, ազատել գաղութներն ու կախյալ երկրներն իմպերիալիստների ճնշումից, և

բ) Անարդարացի, հափշտակողական պատերազմ, որի նպատակն է զավթել և ստրկացնել ուրիշ երկրներ, ուրիշ ժողովուրդներ»։[2]

Մարքսիզմի այս հանճարեղ ուղենիշ դրույթները օգնում են մեզ ճիշտ ըմբռնելու հայոց պատմության 5-րդ դարի իրադրությունները։

Ինչպես տեսանք, Հազկերտի և պարսից արքունիքի վարած քաղաքականությունը բերել-հասցրել էր այն բանին, որ հայ հասարակության բոլոր խավերը դժգոհ էին այդ քաղաքականությունից և պատրաստ էին պարսից տիրապետության դեմ ելնել, և նրանցից ամեն մեկը ձգտում էր նախ և առաջ իր սոցիալական ու քաղաքական պահանջներին բավարարություն տալ։ Սակայն պարսկական արքունիքի վարած քաղաքականությունը միաժամանակ շոշափում էր նաև ամբողջ հայ ժողովրդի համընդհանուր քաղաքական շահերը՝ սպառնում էր վերջնականապես զավթել Հայաստանը և օգտագործել նրա սրտրատեգիական դիրքը՝ հարևան երկրները և Բյուզանդիան գրավելու, վերջ տալու հայկական պետական ինքնավարության վերջին մնացորդներին, և վերջապես՝ հայկական պետական ինքնավարության վերջին մնացորդներին, և վերջապես՝ սպառնում էր վերացնել հայ ժողովրդի ինքնուրույն գոյությունը։ Վտանգված էին, ուրեմն, հայ հասարակության բոլոր խավերի շահերը՝ առանձին-առանձին վերցրած, միաժամանակ վտանգված էր հայ ժողովրդի ընդհանուր շահը։ Եվ ահա պատմական այս մոմենտում ընդհանուր թշնամու դեմ ելնում են հայ հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները, որը երբեք չ՝ի բացառում դասային ու դասակարգային հակասությունների առկայությունը հայ հասարակության մեջ այդ ժամանակ։ Պարզ է մի բան. պարսից, օտա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր հ. 23-րդ, էջ 29. (հայերեն հրատարակություն)։

[2] Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց, 1946 թ., էջ 230—231։

բերկրյա զավթիչների դեմ պատերազմի ելած հիմնական ուժը ժողովուրդն էր, պատերազմի բախտը ժողովուրդն էր բնորոշում և ոչ մի բուռն հոգևորականներ ու նախարարներ։

Ահա թե ինչու 451 թվի պատերազմը պետք է կոչել արդարացի, ժողովրդա-ազատագրական պատերազմ, որը հայերի կողմից մղվում էր օտար տիրապետության դեմ, ստրկացումից ու կեղեքումից ազատվելու համար։ Պարսկական արքունիքի կողմից այն անարդարացի էր, հափշտակողական, որը նպատակ ուներ գավթել Հայաստանը, ստրկացնել, ապա և վերջ տալ հայ ժողովրդի ինքնուրույն գոյությանը։